**Համաձայնագիր N 1**
**«03» մարտի 2017թ. կնքված «*ԱՍՀՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/3-Վ*» ծածկագրով պետության կարիքների համար բժշկա-սոցիալական վերականգնման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում լրացում կատարելու մասին**

ք. Երևան « 15 » դեկտեմբերի 2017թ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև Պատվիրատու) և «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով «*ԱՍՀՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/3-Վ*» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 7.3-րդ կետը համաձայնության են գալիս պայմանագրում կատարել հետևյալ լրացումը.

1. Պայմանագրում ավելացնել նոր 4.1.1 կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 18170000 (Տասնութ միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարում իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումների նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Կանխավճարի մարման վերջնաժամկետ է սահմանվում 01.03.2018թ.:»

2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:
4. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից: Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական - 3 տուն
Երևանի թիվ 1 գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900011016707 ՀՎՀՀ՝ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Աշխատակազմի ղեկավար ........ Ա.Գրիգորյան
(կնիքը, ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**

" Արթմեդ" բժշկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ՝ 157 000 306 116 0300
ՀՎՀՀ ՝ 00804703

Տնօրեն ........ Ա. Աբգարյան
(կնիքը, ստորագրություն)